

**Հարց 1. Արդյո՞ք գինեգործության ոլորտի ծրագրերը կարող են ֆինանսավորվել ԱԶԴ ներքո:**

Համաձայն «Արտահանողների զարգացման դրամաշնորհների» ուղեցույցի՝ Հավելված 10-ի (Ապրանքների և ծառայությունների «Բացառված ծախսերի») Համաշխարհային Բանկի ցանկը) արգելված է աջակցությունը ոգելից խմիչքների արտադրությանը/առևտրին:

Ինչ վերաբերվում է **գինեգործության ոլորտի ծրագրերին**, ապա հաշվի առնելով գինեգործության ոչ միայն տնտեսական այլև մշակութային դերը և նշանակությունը ՀՀ-ում, ապա գինու արտադրության (հատկապես փոքր և միջին չափի արտադրությունը, որում օգտագործում են ավանդական տեխնոլոգիաներ, տեղական սորտեր և այլն) ծրագրերը կարող են ներկայացվել, որոնք ենթակա են քննարկման և որոշումների կայացման՝ որպես առանձնահատուկ դեպքեր:

**Հարց 2. Կա՞ն սահմանափակումներ դրամաշնորհառուների կողմից ապրանքների սարքավորումների գնման վերաբերյալ՝ ապրանքի ծագման երկրի հետ կապված:**

Նման սահմանափակումներ չկան

**Հարց 3. Կա՞ արդյոք պահանջ, որ ապրանքները, սարքավորումները լինեն նոր, թե երկրորդական շուկայից (օգտագործված) գնվածները նույնպես թույլատրելի են:**

Ընդհանրապես ցանկալի է նոր սարքավորումների և ապրանքների օգտագործումը: Այնուամենայնիվ, անհրաժեշտության և հիմնավորման դեպքում դա հնարավոր է, սակայն հետևեյալ դեպքերում՝

1. օգտագործված ապրանքների գնումը և նոր ապրանքների գնումը պետք է կազմակերպվի առանձին,
2. տեխնիկական պահանջներում/բնութագրերում պետք է ներկայացվեն օգտագործված ապրանքատեսակների նվազագույն բնութագրերը՝ ներառյալ տարեթիվը և վիճակը, և այլն.
3. անհրաժեշտ է հստակեցնել երաշխիքի համապատասխան դրույթները:

**Հարց 4. Կա՞ արդյոք կանոնակարգ՝ շահերի բախման վերաբերյալ, այսինքն՝ միևնույն ընկերության կողմից մեկից ավելի առաջարկներ ներկայացնելու հնարավորություն, և նույն ընկերության մասնակցությունը մեկից ավելի կոնսորցիումներում, և առաջարկի ներկայացումն ընկերության կողմից, որը մասնակցում է մեկ այլ ընկերության հետ, որպես կոնսորցիումի գործընկեր:**

Մրցույթի համար սահմանվում է ոչ ավել, քան 2-3 հայտ: Այսինքն՝ ընկերությունը 2-3 հայտից ավել իրավունք չունի ներկայացնել մրցույթին մասնակցելու համար: Այս կերպ չի խրախուսվում ոչ մի խեղաթյուրված քայլ, և ընկերությունը պետք է ընտրի լավագույն առաջարկները մասնակցելու համար: Ի վերջո ընկերությունը կարող է օգտվել միայն մեկ դրամաշնորհից:

**Հարց 5. Դրամաշնորհի ներքո իրավասու ծախսերի մեջ ներառված են «աշխատավարձերը, կոմունալ ծախսեր, վարձակալական ծախսեր» սակայն Հավելված 5. «Ծրագրի բյուջեղ» բաժնում հստակեցված չեն թե՛ ինչպես է լրացվելու:**

Դրամաշնորհի ներքո իրավասու ծախսերի մեջ ներառված **«աշխատավարձերը, կոմունալ ծախսեր, վարձակալական ծախսեր»** ներառելու համար անհրաժեշտ է ավելացնել առանձին տող: Հաշվի առեք, որ այս ծախսերը փոխհատուցվելու են համաֆինանսավորման հաշվին: